23538
331.8
Գ-68
63
13700

բոլոր յերկրների միացեք

ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄՆԵՐԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. Մ-ՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան

Հրատարակություն Գյուղանտառյա Արհմիության
Հայաստանի Կենտրոնական Վարչության

1928 թ.
ԵՐԵՎԱՆ

23538

0 MAR 2013

ՀԱՅԳՈՒԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատ. 731 գ. Պատվեր 9230 Տիրաժ 3000

331.8
Գ-68

15 JAN 201

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂ-ԲԱՆԿՈՄՆԵՐԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուղ-բանկոմներին կից աշխատանքի պաշտպանության հանձնաժողովների կանոնադրությունը կյանքում կիրառելու վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում տալ մի քանի ցուցմունքներ։

1. Յուրաքանչյուր գյուղ-բանկոմին կից, պետք է լինի միայն մեկ Աշխ-պաշտպանության

Հանձնաժողով։ Յեթե վորևե գյուղ բանկում ընդգրկում է մի քանի գյուղ, անհրաժեշտ է բոլոր հեղափոխության աշխ-պաշտպանության հանձնաժողովի կազմի մեջ մտցնել բոլոր այդ գյուղերի ակտիվ բանվոր-բանվորուհիներին։ Այդ գյուղերում առանձին հանձնաժողովներ ստեղծելն, աննպատակահարմար է։

2. Աշխ-պաշտպանության հանձնաժողովները պետք է սպասարկեն առաջին հերթին մուրության անդամներին և աշխ-պայմանագրերով ընդգրկած բատրակներին, բատրակուհիներին և հովիվներին։

Այլ բատրակների ու հովիվների սպասարկումը հանձնաժողովի կողմից կարող է կատարվել միայն, դրա համար հեղափոխությունն և ժամանակ լինելու դեպքում։

3. Շրջկոմներն իրենց հերթին պետք է շարունակ հետևեն վոր գյուղ-բանկոմները մշտական դեկավարություն ցույց տան աշխ. պաշտպանության հանձնաժողովներին, կանոնավոր, յուրաքանչյուր ամիս իրենց (գյուղ-բանկոմների) նիստերում լսելով նրանց հաշվետվությունները տարած աշխատանքների մասին։

4. Աշխ. պաշտպանության

հանձնաժողովի աշխ. ծրագիրը պետք է անպայման կազմվի 6 ամսով, և հաստատվի Գյուղ-Բանկոմի կողմից։

5. Աշխ. պաշտպանության հանձնաժողովներն իրենց աշխատանքներում առանձնապես պետք է ուշադրություն դարձնեն կանոնադրության 3-րդ կետի վրա։ Աշխ. պայմանագիրը սաուզելիս հատկապես աշխ. պաշտպանության հանձնաժողովները պետք է հետևեն՝

ա) Աշխատավարձը ժամանակին, լրիվ և ճիշտ վճարելու վրա։

բ) Աշխ. պայմանագրով նախատեսված հագուստն ու վոտնամանը տալու վրա։

գ) Վոր վարձուները վարձվողների աշխատավարձից վոչ մի տեսակի բռնագանձումներ ու հանումներ չկատարեն։

դ) Վոր բնակարանն ու ուտելիքը տրվի բատ պայմանագրի։

յե) Վոր վարձուները չխախտեն բանվորական որվա տեվողության, և հանգստի որ հատկացնելու տեթիվ աշխ. պայմանագրով նախատեսված պահանջները։

զ) Վոր տան որվա համար տրվի լուսացուցիչ վարձատրություն բատ պայմանագրի։

Ե) Վոր վարձողները չափպեն անչափահասներին ու հղի կանանց, իրենց ուժերից վեր և առողջության համար վտանգավոր աշխատանքներ կատարեն։

Զ) Վոր վարձողներն արգելք չհանդիսանան վարձվողներին, մասնակցելու հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, հաճախեն ժողովներ, խրճիթ ընթերցարաններ, լիկկայաններ, դպրոցներ, ակումբներ, ժողովներ և այլն։ (Ծանոթություն աշխ. պաշտպանության հանձնաժողովները պետք է գիտենան վոր

խորհրդի ընտրությունները վարձվողներն կարող են մասնակցել աշխատանքի ժամերին, իսկ այլ կազմակերպությունների ժողովներին — վոչ աշխատանքի ժամերին)։

Թ) Վոր վարձվողներին տրվի հասանելիք արձակուրդն ըստ պայմանագրի։

Ժ) Պետք է հետևեն վոր վարձողները ժամանակին վճարեն սոց-ապահովագրական մուծումները և չապահովագրված ների աշխատավարձը նրանց հիվանդության դեպքում։

Ի) Վոր մինչությանն ըստ պայմանագրի հասանելիք գումարները

ժամանակին վճարվեն։

Ահա սրանք են Աշխ. պաշտպանության հանձնաժողովների ամենակարևոր ու անհրաժեշտ անելիքները, որոնք կանոնավոր տանելով մեր միութենական մարմինները, որոշ չափով կապահովվեն բատրակների, բատրակուհիների հովիվ—տավարաբածների և մյուս բանվորների Աշխ. պաշտպանությունը։

ԳՅՈՒՂ-ԱՆՏԱՌ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԱՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐԻՉ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
№ 878

29 փետր 1928թ.
ԵՐԵՎԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄՆԵՐԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՍԺՈՂՈՎՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Գյուղատնտեսական ու անտառային բանվորների աշխատանքի պաշտպանությանը վերաբերող միութենական աշխատանքներն ուժեղացնելու համար, գյուղբանկոմներին կից կազմակերպվում են աշխատանքի պաշտպանության հանձնաժողովներ։

2. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը գյուղբան-

կոմի այն մարմինն է, որը հրա-
կում է գյուղբանկոմների կողմից
ընդգրկած բատրակների, հովիվների
և առհասարակ գյուղատնտեսական
ու անտառային բանվորների այլ
խմբերի աշխատանքի պաշտպանու-
թյան վրա։

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Գյուղբանկոմներին կից կազ-
մակերպվող աշխատանքի պաշտ-
պանության հանձնաժողովների
կազմը առաջադրվում է գյուղ-
բանկոմի կողմից 3-ից մինչև 5 հո-
գի միության անդամներից։ Աշխ-
պաշտպանության հանձնաժողովի

նախագահն անպայման պետք է
լինի գյուղբանկոմի վարիչ անդամը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ Ընդհանուր
կամ պատգամավորական ժողով-
ներում աշխպաշտպանության
հանձնաժողովի կազմի ընտրու-
թյուն չի կատարվում։

3. ԱՇԽՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

4. Աշխպաշտպանության հանձ-
նաժողովը ստուգում է միության
միջոցով կնքած աշխ. պայմանա-
գրերի կատարումը վարձողների
կողմից։ Այդ ստուգումները կատա-
րելիս աշխպաշտպանության հանձ-
նաժողովները միաժամանակ հետ-

վում են, վոր վարձողների կողմից կիրառվեն բոլոր աշխատանքային օրենքները այն է՝

ա) Աշխատանքի օրենսգիրքը (արդյունաբերական տիպի գյուղացիակ. տնտեսություններում).

բ) Հասարակական հովիվների վերաբերյալ յեղած օրենքը.

գ) «Ժամանակավոր Կանոնները» և ի զարգացումն նրա հրատարակած հրահանգները (ոժանդակ վարձու ուժ կիրառող գյուղացիական տնտեսություններում).

դ) Տնայնագործների մոտ աշխատող աշակերտության վերաբերյալ յեղած օրենքը.

յե) Մեքենայի վրա աշխատելու տեխնիքական անվտանգության կանոնները.

զ) Սոցապահովագրության և այլ օրենքները։

Վարձողների կողմից աշխ. պայմանագրերի կետերը, կամ աշխատանքային օրենքները խախտելու դեպքում, աշխ. պաշտպանության հանձնաժողովներն այդ խախտումների մասին հայտնում են գյուղբանկոմին, համապատասխան մարմինների միջոցով անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։

5. Հետաքրքրում է վարձողների մոտ ապրող բատրակների-բատ-

բակուհինների ու հովիվ-տավարածների աշխատանքներով նախատեսված բնակարանային, սանիտարական ու կենցաղային պայմանները։

6. Աջակցում է աշխ. տեսչին, նրա կողմից բատրակների, բատրակուհիների ու հովիվ-տավարածների աշխ. պայմանները հետազոտելու առթիվ կատարվող հետազոտություններին և աշխատանքի առթիվ տրվող ձեռնարկումներին։

7. Հսկում է, որ իրագործվեն աշխ. տեսչության կողմից տրված բոլոր առաջադրությունները։

8. Ձեռնարկումներ ու այլ միջոցներ է մշակում բատրակների ու հովիվների աշխ. պայմաններն ու կենցաղը բարելավելու համար։

9. Մասնակցում է բատրակներին ու հովիվներին աշխատանքային որենսդրության ծանոթացման ու սանիտարական կրթության առթիվ տարվող կուլտուր-կրթական աշխատանքներին։

10. Հոգ է տանում, որ լավացվի բատրակության ու հովվության տրվող բժշկական ոգնությունը, նույնպես և կիրառվի սոցապահովագրություն։

4. ԸՆԹԵՑՄԱՆՔԻ ԿԱՐԳԸ

11. Աշխ. պաշտպանութ. հանձնաժողովն աշխատում է գյուղբանկոմի անմիջական ղեկավարության տակ և նրա կողմից հաստատված ծրագրով։

12. Աշխ. պաշտպանութ. հանձնաժողովն, ամեն ամիս տարած ամբողջ աշխատանքների մասին հաշվետվություն է տալիս գյուղբանկոմին (գրավոր կամ բանավոր)։

13. Աշխ. պաշտպանութ. հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ամիսը 2 անգամից վոչ պակաս և տեղի չեն ունենում, վոչ աշխատանքի ժամերին։

Հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքի համար առանձին վարձատրություն չեն ստանում։

14. Աշխ. պաշտպանութ. հանձնաժողովի վորոշումներն արձանագրվում են ու ստորագրվում հանձնաժողովի նախագահի կողմից և հաստատվում և գյուղ-բանկոմի նիստում։

15. Հեռագրություններ և աշխ. պայմանագրերի կատարման ստուգումներ կատարելիս աշխ. պաշտպանության հանձնաժողովները վոչ մի արձանագրություն չեն կազմում, այլ նկատված բոլոր խախ-

տումների և թերութիւնների մասին բանավոր կամ գրավոր, մանրամասն հայտնում են գյուղբանկոմին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ Աշխ. պաշտպանութեան հանձնաժողովներն աշխ. պայմանագրերը չկիրառող և կամ գոյութիւն ունեցող օրենքները խախտող վարձողների նկատմամբ, անմիջականորեն վոչ մի միջոց ձեռք չեն առնում, այլ իրենց բոլոր առաջարկութիւններն անց են կացնում միայն գյուղբանկոմների միջոցով։

16. Հնտագոտութիւններն ու աշխ. պայմանագրերի ստուգումները կարող են կատարվել հանձնաժողովի ամբողջ կազմով, կամ հանձնաժողովի առանձին անդամների կողմից, ըստ հանձնաժողովի, կամ նրա նախագահի հատուկ հանձնարարութեան։

«Ազգային գրադարան»
NL0205335

ԳՅՈՒՂԱՆՏԵՍԱ ԵՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ՝

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ. — «Բամբակ կնքիր պայմանագիր» փոխանակով . . 3
2. Լ. ԿՈՒԼԻԿՈՎ.— «Ինչպես պետք է կազմակերպել ու դաստիարակել բամբակենիներին և պաշտպանել նրանց չարերը» 43 յեր . . . 15
3. «Բամբակ տուր Լենինին» պլակատ 4 գույնով (սպառված) 16
4. «Ինչպես Գյուղանտես միություններ պաշտպանեց բամբակենին» պլակատ 1 գույնով (սպառված) . . 3
5. Գյուղբանկոմներին կից աշխատապաշտպանության հանձնաժողովների կանոնադրություն 3
6. Գյուղբանկոմներին կից հողա. հանձնաժողովների կանոնադրությունը 3

Դիմել՝ Յերևան, ուշիանովի փողոց, գյուղանտես միության կենտրոնական վարչության.

—

ԳԻՆՆ Է 3 ԿՈՊ.